



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ  
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010  
 Վ.Սարգսյանի փ. 26/1  
 «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ  
 Հեռախոս + 374 (10) 595 999  
 Վեբ կայք www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

### «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

#### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԻ կանոնագրքը) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, գերծ են Եական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Եական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է Եական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Եական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:



Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան  
Ղեկավար գործընկեր, «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ-ի ստորագրող

KPMG Armenia LLC

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ  
14 դեկտեմբերի 2021թ.



**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
<b>Ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	10	2,595,186	2,674,836
Ոչ նյութական ակտիվներ		14,799	24,434
Ներդրումային գույք	11	2,098,589	2,137,218
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		49	49
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>4,708,623</b>	<b>4,836,537</b>
Պաշարներ	12	492,275	507,980
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	13	416,355	1,529,351
Փոխհատուցելի ԱԱՀ		-	877,104
Տամադրված փոխառություններ	14	2,348,252	4,261,634
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	45,624
Ավանդներ բանկերում		-	5,037
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	15	1,285,961	925,529
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		<b>4,542,843</b>	<b>8,152,259</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>9,251,466</b>	<b>12,988,796</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ		223,215	223,215
Էմիսիոն եկամուտ		1,018,215	1,018,215
Զբաղիված շահույթ		6,214,604	5,901,204
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	16	<b>7,456,034</b>	<b>7,142,634</b>
<b>Պարտավորություններ</b>			
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	430,700	451,789
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>430,700</b>	<b>451,789</b>
Վարկեր և փոխառություններ	17	-	2,168,244
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	18	1,304,711	3,113,872
Պայմանագրի գծով պարտավորություններ		40,603	112,257
Ընթացիկ հարկային պարտավորություններ		19,418	-
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,364,732</b>	<b>5,394,373</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>1,795,432</b>	<b>5,846,162</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>9,251,466</b>	<b>12,988,796</b>

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ. համար**

հազ. դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Հասույթ	5	44,932,514	65,499,266
Վաճառքի ինքնարժեք	6	(44,322,461)	(63,868,356)
<b>Համախառն շահույթ</b>		<b>610,053</b>	<b>1,630,910</b>
Այլ եկամուտ		500,902	352,157
Վարչական ծախսեր	7	(747,776)	(783,472)
Իրացման ծախսեր		(222,074)	(307,011)
Այլ ծախսեր		(302,323)	(245,423)
<b>Գործառնական գործունեության արդյունքներ</b>		<b>(161,218)</b>	<b>647,161</b>
Ֆինանսական եկամուտ	8	649,026	251,835
Ֆինանսական ծախսեր	8	(59,087)	(144,962)
<b>Չուս ֆինանսական եկամուտ</b>		<b>589,939</b>	<b>106,873</b>
<b>Շահույթ նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>428,721</b>	<b>754,034</b>
Շահութահարկի գծով ծախս	9	(115,321)	(193,941)
<b>Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար</b>		<b>313,400</b>	<b>560,093</b>

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. դեկտեմբերի 14-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սահակ Կարապետյան  
Գլխավոր տնօրեն

Լուսյա Արրահամյան  
Գլխավոր հաշվապահ

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2020թ. համար**

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	223,215	1,018,215	5,341,111	6,582,541
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Շահույթ տարվա համար	-	-	560,093	560,093
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>560,093</b>	<b>560,093</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.</b>	<b>223,215</b>	<b>1,018,215</b>	<b>5,901,204</b>	<b>7,142,634</b>
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	223,215	1,018,215	5,901,204	7,142,634
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>				
Շահույթ տարվա համար	-	-	313,400	313,400
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>313,400</b>	<b>313,400</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.</b>	<b>223,215</b>	<b>1,018,215</b>	<b>6,214,604</b>	<b>7,456,034</b>